

Ս. Էլոյաճ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ
ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Բառակազմական և բառահարաբերական մասնիկների ճիշտ տարբերակման և սահմանորոշման հարցը լեզվաբանության կարևոր հարցերից մեկն է:

Հայերենում ընդունված է հոլովման և խոնարհման վերջավորությունները, հոգնակիներն ու հոգերը համարել բառահարաբերական կամ բառափոխական մասնիկներ (словонизменительный), իսկ այն մասնիկները, որոնք չեն արտահայտում բառերի զանազան հարաբերություններ, այլ փոխում են նրանց իմաստները և նոր բառեր են կազմում բառակազմական կամ բառաստեղծական (словообразовательный) ածանցներ:

Քանի որ քերականական իմաստ արտահայտող մասնիկներից միայն հոլովման և խոնարհման վերջավորությունները, հոգնակիներն ու հոգերն են համարվում բառահարաբերական կամ բառափոխական մասնիկներ, իսկ քերականական իմաստ արտահայտող մյուս դերբայական և կերպաչին մասնիկները՝ կերպածանցներ կամ դերբայական վերջավորություններ, ապա կարելի է քերականական իմաստ արտահայտող այս բոլոր մասնիկները կամ ածանցները անվանել մի ընդհանուր տերմինով՝ ձևաբանական իմաստ ունեցող մասնիկներ կամ ածանցներ:

Սակայն ձևաբանական և բառակազմական մասնիկների միջև պարզ և որոշակի սահմանադիտ զննելը երբեմն դժվար է և պետք է ասել, որ քերականական իմաստ ունեցող մասնիկներից ոչ բոլոր մասնիկների տարբերակման և սահմանորոշման հարցն է լրիվ պարզաբանված: Այդ այն պատճառով, որ ձևաբանական իմաստ արտահայտող մասնիկների, հատկապես բայածանցների ձևաբանական և բառակազմական իմաստները երբեմն ձուլված են միմյանց, իսկ նրանցից մի քանիսը հանդես են գալիս նաև բառաստեղծական նշանակությամբ, այսպես են, օրինակ՝ կրավորական «վ» ածանցը, կերպաչին մյուս ածանցները (պատճառական, բաղմապատական) և դերբայական մասնիկները:

Բառահարաբերական և բառակազմական մասնիկների և ածանցների տարբերակման և սահմանորոշման հարցում տարբեր կարծիքներ են արտահայտվել ուսս քերականագիտության մեջ:

Անցյալում տենդենց էր նկատվում՝ որքան կարելի է նեղացնել ձևաբանության բնագավառը և հարստացնել նրա հաշվին շարահյուսությունը. ձևաբանությունը մնում էր միայն խոնարհումն ու հոլովումը:

Շարահյուսության մեջ էին դասվում բառակազմության այնպիսի ձևեր, ընչպիսիք են՝ ածանցման միջոցով խոսքի մասերի առաջացումը, զոյական առունների փոքրացուցիչ-փաղաքշական ածանցները, որովհետև վերջիններս

սևոտի համաձայնվում են իրենց հետ գործածվող ածականների հետ. օրինակ՝ маленький кусочек (փոքրիկ կտոր), добренькая старушка (բարի պառավ), чистенькая рубашка (մաքուր վերնաշապիկ)¹:

Այս հարցին անդրադարձել է նաև Ա. Մ. Պեշկովսկին:

Համեմատելով հեղինակի երկու աշխատությունների² մեջ արտահայտած կարծիքները բառահարաբերական և բառակազմական ձևերի բնորոշման և սահմանազատման վերաբերյալ, մենք տեսնում ենք, որ հեղինակը մի ղեպքում «բառափոխություն» ասելով հասկանում է ոչ թե բառերի ձևերի փոփոխությունները հոլովմամբ և խոնարհմամբ, այլ հենց բառերի բառակազմական փոփոխությունները, իսկ մյուս ղեպքում ժխտում է հիշյալ թեզը և գտնում, որ «բացարձակ ոչ շարահյուսական կատեգորիաներ գոյություն չունեն», կարճ ասած՝ ամեն ինչ դասում է բառահարաբերական ձևերի շարքում:

Բառակազմական և բառահարաբերական ձևերի սահմանազատման հարցում տարրեր տեսակետներ են հայտնվել նաև արդի լեզվաբանության մեջ:

Լեզվաբան պրոֆ. Բուլախովսկին բառակազմական և բառահարաբերական ձևերի ճիշտ սահմանազատումը համարելով լեզվաբանության կարևորագույն հարցերից մեկը, գոյական անվան հոգնակի թվի սահմանազատման հարցը պատկերացնում է հետևյալ կերպ. ինչպես հայտնի է, բառահարաբերական ձևերը չի կարելի փոխառնել տարրեր լեզուներից, եթե, իհարկե, նրանք շատ մոտ ազգակցություն չունեն միմյանց հետ: Սակայն պատահում են ղեպքեր, երբ գոյականի հոգնակի ձևերը, որոնք մտնում են բառահարաբերական ձևերի մեջ, փոխ են առնվում ուրիշ լեզուներից (լեհերենը փոխ է առել լատիներենից): Սրանից պրոֆ. Բուլախովսկին գալիս էր այն հետևություն, որ բառակազմական և բառահարաբերական ձևերի միջև տարբերություն գնել չի կարելի. «այսպիսով, քանի որ հոլովի կատեգորիան պատկանում է բառափոխությանը, իսկ գոյականի թիվը բառակազմությանը (ընդգծումը մերն է). արդեն այստեղ բացարձակ տարբերություն գնել այս երկու ձևերի միջև անհնար է»:

Հոլովման և խոնարհման վերջավորությունները, անկասկած, մտնում են բառափոխական կամ, ավելի ճիշտ կլինի ասել, բառահարաբերական ձևերի մեջ, քանի որ «բառափոխություն» տերմինը չի արտահայտում այն, ինչ երկար ժամանակ լեզվաբանները հասկացել են նրա տակ և «բառափոխություն» ավելի շուտ տրամադրում է հասկանալ բառակազմություն կամ բառաստեղծություն, քան բառահարաբերություն:

Պատահել են ղեպքեր, երբ գոյականի ուղղական հոլովի վերջավորությունները փոխառարար մի լեզվից անցել են մեկ ուրիշ լեզվի. օրինակ՝ լատիներենից լեհերենին, Կոմի-Զիրյաներենից Իդիշին և այլն, սակայն հենց միայն այս փաստից ելնելով (փոխառյալ լինելու) չի կարելի գոյական ան-

¹ А. Шахматов, Синтаксис русского языка, Ленинград, 1914, стр. 453.

² А. М. Пешковский, Наш язык, учебная книга по грамматике, часть II, элементы морфологии и синтаксиса, книга для учителя, издание II, переработанное, Москва—Ленинград, 1925, стр. 32. А. М. Пешковский, О грамматическом разборе. «Русский язык и литература в школе», Москва, 1934, стр. 10.

³ Л. А. Булаховский, Вопросы исторического развития языка в свете работ И. В. Сталина по языкознанию, Вопросы языкознания в свете работ И. В. Сталина, Москва, 1950, стр. 133.

վան ուղղական հոլովի հոգնակի թվի ձևերը համարել բառակազմական ձևեր, քանի որ, երբ ասում ենք «սեղան», «սեղաններ», «գիրք», «գրքեր», բոլորովին էլ չեն փոխվում «սեղան» և «գիրք» բառերի նյութական իմաստները և չեն ստեղծվում նոր իմաստներով բառեր, փոխվում է միայն այդ բառերի թիվը, որը լեզվաբանության մեջ համարվում է քերականական կատեգորիա:

Ակադեմիկոս Վինոգրադովը, որը մեծագույն ծառայություն է մատուցել լեզվաբանությանը, հատկապես, բառակազմության վերաբերյալ միանգամայն ճիշտ է մոտենում այս հարցին, նա գրում է. «Ռուսաց լեզուն տիրապետողներից ոչ ոք չի կասկածի այն բանում, որ „БУТЫЛКИ“ (շշեր), „БУТЫЛОК“ (շշերի) և այլն—սրանք «շիշ» բառի հոգնակի թվի ձևերն են և ոչ թե նոր բառեր, որ „ЛЮБИТЬ“ (սիրել), „ЛЮБЯ“ (սիրելով), „ЛЮБ.ЛЮ“ (սիրում եմ) և այլն, կազմում են միևնույն բառի ձևերի շարքը և ոչ թե տարբեր ձևեր են»:

Ռուս գիտական քերականության մեջ քերականական իմաստ արտահայտող մասնիկների (թեքությունների և ածանցների) համար գործածվում է «ձևակազմություն» (формообразование) տերմինը:

Սակայն ոուսաց լեզվում բառակազմական և ձևաբանական ածանցների տարրերական հարցը մի փոքր այլ է, քան հայոց լեզվում:

Այնտեղ, մեծ թվով կազմությունների մեջ (հատկապես բայերի) ածանցների ձևաբանական և բառակազմական հատկանիշները ձուլված են միմյանց. միևնույն բառակազմական ածանցը միևնույն կազմության մեջ կարող է և նոր բառ ստեղծել և թե բառին քերականական իմաստ հաղորդել. այսպես՝ толкать—вытолкать, ломать—выломать, писать—написать, думать—подумать և այլ կազմություններում, „вы“, „по“, „на“ ածանցները և՛ կատարյալ կերպի իմաստ են հաղորդել ածանցվող բայերին և թե նոր բառակազմական իմաստ, որի հետևանքով և հիշյալ ածանցները ոուսաց լեզվում համարվում են ձևակազմական ածանցներ:

Այս երևույթը, որ կազմում է ոուսաց լեզվի բնորոշ առանձնահատկություններից մեկը, առանձնահատուկ չէ, սակայն, հայոց լեզվի համար:

Արդի հայերեն լեզվում միևնույն ածանցը կամ մասնիկը տվյալ դեպքում կարող է հանդես գալ միայն մեկ նշանակությամբ. այն է՝ կամ ձևաբանական և կամ բառակազմական. օրինակ՝ կրավորական «վ» ածանցը դրվելով «սիրել» բառի վրա ածանցվող բային (սիրվել) հաղորդում է կրավորական իմաստ, այն նոր բայ չի կազմում նոր բայական իմաստով, այլ փոխում է միևնույն բայի գործողության կատարման ձևը (գործողությունը կրավորաբար է ընթանում):

Իսկ մեկ ուրիշ դեպքում հիշյալ ածանցը կարող է հանդես գալ միայն բայերի բաղադրության մեջ՝ կոնկրետացնող կամ որոշակիացնող նշանակությամբ. օրինակ՝ գծվել, պարտվել, սթափվել, համաձայնվել, զմայլվել և այլ կազմությունները խոսքի մեջ չեն կարող կոնկրետություն ունենալ առանց «վ» ածանցի, հետևաբար նշված օրինակներում «վ» ածանցը քերականական իմաստ չունի, այն հանդես է գալիս միայն բաղադրական նշանակությամբ:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ հայերենում քերականական իմաստ ար-

¹ В. Виноградов, Словообразование в его отношении к грамматике и лексикологии, Вопросы теории и истории языка в свете трудов И. В. Сталина по языкознанию, Москва, 1952, стр. 107.

տահալսող ածանցներից կերպային իմաստ արտահալսող ածանցները (վ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, տ, կոտ) որոշ չափով մոտենում են բուն ածանցների նշանակութանը:

Այս մասին ճիշտ է նկատել նաև պրոֆ. Ա. Ղարիբյանը. «Բայական ածանցներից բուն ածանցներին մոտենում են միայն կերպածանցները: Նրանք նոր բայեր են կազմում, որոնք բայի ցույց տված գործողության կատարման նոր ձև են ցույց տալիս»:

Հայերենի ձևաբանական և բուն ածանցների մեջ բայական կերպածանցները գտնվում են, կարելի է ասել, մի տեսակ միջին օղակում: Նրանք ունեն թե՛ ձևաբանական և թե՛ բառակազմական նշանակություն, սակայն գերիշխողը նրանց մեջ ձևաբանական նշանակությունն է, քանի որ նրանք գործածվում են միայն բայի կառուցվածքի մեջ և ցույց են տալիս միևնույն բայի գործողության զանազան կերպերը, միևնույն բայի գործողության տարրեր երանգները, որի համար և իրավամբ համարվել են ձևաբանական իմաստ արտահալսող ածանցներ:

Սակայն, պետք է տարբերություն դնել բայական կերպածանցների և զուտ քերականական իմաստ արտահալսող մյուս մասնիկների միջև (հոլովման և խոնարհման վերջավորությունների):

Այսպես. երբ ջարդել, խմել, հագնել, սանրել, բայերին ավելացնում ենք «վ» ածանցը, կազմվում են ջարդվել, սանրվել, խմվել, հագնվել բայերը, որոնց մեջ «վ» ածանցը հիշյալ բայերին հաղորդել է կրավորական իմաստ՝ աչն, որ գործողությունը տեղի է ունենում կրավորաբար. մի դեպքում ենթական է իր վրա կատարում (ջարդվել, խմվել), մյուս դեպքում ենթական ինքն իր հետ է կատարում (սանրվել, հագնվել), հետևաբար, առաջին դեպքում մենք գործ ունենք կրավորական սեռի, իսկ երկրորդ դեպքում՝ անդրադարձ սեռի բայերի հետ, որոնք ածանցվելով նոր բայական իմաստներ չեն ստացել, սակայն փոխվել են նրանց գործողության կատարման ձևերը, որի հետևանքով և ածանցվող բայերը դարձել են կրավորական բայեր:

Վերցնենք նաև բայի կերպային մյուս ածանցները՝ պատճառական և բազմապատկական ածանցները: «Նստել» բայի վրա ավելացնելով «եցն» և «ոտ» ածանցները կազմվում են «նստեցնել» և «նստոտել» բայերը, որոնք միևնույն «նստել» բայի արտահալսած գործողության տարրեր ձևերն են, նստելու գործողության տարրեր երանգները. այսպես. «եցն» ածանցը «նստել» բայի գործողության հաղորդում է մեկ ուրիշի կողմից այդ գործողության կատարման ընթացքին միջնորդելու դադափար, իսկ «ոտ» ածանցը բազմապատկում, կրկնակի է դարձնում միևնույն «նստոտել» բայի գործողությունը: Բայի «ացն», «եցն», «ցն» ածանցները կոչվում են պատճառական ածանցներ, իսկ «ատ», «ոտ», «տ», «կոտ» ածանցները՝ բազմապատկական:

Այսպիսով, բայի կերպածանցները զրկվելով բայերի վրա թեև չեն փոխում բայերի արտահալսած իմաստները և չեն առաջացնում նոր իմաստով կազմություններ (ինչպես անում են բուն ածանցները), սակայն նրանք բայի ունեցած գործողությունը հարստացնում են զանազան երանգներով, զանազան ձևերով և կերպերով և, հետևաբար, երանգավորող բայածանցներն

¹ Ա. Ղարիբյան, Հայերենի կերպածանցները և նրանց ուսուցումը, «Սովետական մանկավարժ», 1956, № 10, էջ 241:

ուենեն թե՛ ձևաբանական և թե՛ բառակազմական նշանակություն, սակայն բա-
լաթանցների բառակազմական նշանակությունը դեռևս թույլ է և հավասարա-
զոր չէ նրանց ձևաբանական նշանակությանը, ինչպես ողուսաց լեզվում,
որտեղ միևնույն բալաթանցը («ВЫ», «ПО», «НА») կարող է հավասար կեր-
պով դիտվել, և՛ բառակազմական, և՛ ձևաբանական ածանց, նախած թե որ
տեսանկյունով ենք մոտենում բալաթանցների նշանակությանը: Այժմ տես-
նենք, թե որքանով են արդի հայերենի բալաթանցները նմանվում բուն
ածանցներին և որոնք են նրանց տարբերակիչ գծերը:

Բալաթանցները բուն ածանցներից տարբերվում են ոչ միայն նրանով,
որ նրանք սահմանափակ կիրառություն ունեն, այսինքն կիրառվում են
միայն բայերի կազմության մեջ, այլև նրանց ունեցած ձևական կամ ածան-
ցային նշանակությամբ, որով և որոշվում է լուրաքանչլուր ածանցի տեղը
բառակազմության մեջ:

Իրենց արտահայտած ձևական իմաստներով բալաթանցները նմանվում
են ոչ թե բառակազմական ածանցներին, որոնք ավելանալով ածանցվող
բառերի վրա փոխում են նրանց իմաստները՝ նոր բառեր կազմելով, այլ
երանգավորող ածանցներին, որոնք թեև իմաստային որոշ երանգ են հաղոր-
դում ածանցվող բառերին, սակայն նոր բառեր չեն կազմում՝ նոր բառային
իմաստներով:

Այսպես, բուն ածանցներն ըստ նշանակության դասակարգելիս մենք
սովորական բառակազմական ածանցներից տարբերում ենք ածանցների մի
զգալի խումբ՝ անվանելով նրանց երանգավորող ածանցներ:

Երանգավորող ածանցները մեծ մասամբ արդի հայերենի նվազա-փաղաք-
շական նշանակություն ունեցող ածանցներն են (ակ, իկ, ուկ), որոնք ավե-
լանալով ածանցվող բառերի վրա նոր իմաստով բառեր չեն ստեղծում, այլ
բառի ունեցած սկզբնական իմաստի վրա ավելացնում են մի այնպիսի
իմաստ, որից ածանցվող բառերի բառային արժեքները փոխվում են անփոփոխ,
սակայն նրանք ստանում են փոքրացման, փաղաքշանքի կամ գուրգուրանքի
երանգ. օրինակ՝ «տուն», «գիծ», «թե», «ծաղիկ», բառերի վրա ավելացնելով
«վոր», «ային» ածանցները, կազմվում են «տնվոր», «գծավոր», «թեավոր»,
«ծաղկավոր» և «տնային», «գծային», «թեային», «ծաղկային» բառերը, որոնք
իրենց բառական արժեքներով որակապես տարբերվում են նախորդ, դեռևս
չածանցված ձևերից. կոնկրետ առարկա ցույց տվող բառերը (տուն, գիծ, թե,
ծաղիկ) վերածվել են հիշյալ առարկաների հատկանիշն ունեցող բառերի
(գծավոր, ծաղկավոր, թեավոր, տնային, գծային և այլն), ընդ որում փոխ-
վել են նաև ածանցվող բառերի խոսքի մասային արժեքները (զուական
անունները վերածվել են ածական անունների):

Հետևաբար, «վոր» և «ային» ածանցները բառակազմական ածանցներ
են, որովհետև բառակազմական նոր միավորներ են ստեղծում լեզվի մեջ:

Սակայն վերցնենք այս միևնույն «տուն», «գիծ», «թե», «ծաղիկ» բա-
ռերի վրա ավելացնենք «ակ», «իկ» երանգավորող ածանցները, կազմվում
են «տնակ», «գծիկ», «թեիկ», «ծաղկիկ» բառերը, որոնք ըստ էության միևնույն
բառերն են, միայն փաղաքշական և փոքրացուցիչ երանգով, որոնց բառա-
կազմական ածանցներից տարբերվում համար անվանում ենք երանգավո-
րող ածանցներ:

Հետևաբար, արդի հայերենի բայածանցները իրենց արտահայտած ածանցային իմաստներով մոտենում են բուն ածանցներից հենց այս երանգավորող ածանցներին, միայն այն տարբերությամբ, որ երանգավորող ածանցները դրվում են գոյական և ածական անունների վրա և արտահայտում են առարկաների և նրանց հատկանիշների ավելի նուրբ փաղաքշական և փոքրացուցիչ երանգները, իսկ բայածանցները հանդես են գալիս միայն բայերի կառուցվածքի մեջ և արտահայտում են բայերի գործողությունը՝ զանազան երանգները (բազմապատկման, պատճառականություն և այլն) և ունեն ձևաբանական նշանակություն:

Հայագիտության մեջ երանգավորող բայածանցները երկար ժամանակ համարվել են միայն ձևաբանական իմաստ արտահայտող ածանցներ, ինչ խոսք, որ հիմնականում նրանք հենց այդպիսի նշանակություն էլ ունեն, սակայն քիչ չեն նաև այն դեպքերը, երբ բայի կերպածանցները ոչ մի ձևաբանական կամ երանգավորող նշանակություն չունեն, այլ հանդես են գալիս միայն բայի կազմության մեջ և ունեն սոսկ բաղադրական, երբեմն նաև բառակազմական նշանակություն:

Վերցնենք «վ» բայածանցը:

Արդի հայերենի այս «վ» ածանցը գալիս է մեր լեզվի պատմության վաղ ժամանակներից: Այն նախապես արտահայտվել է հարակատար դերբայի սկզբնական ձևերի մեջ և քերականական կանոնների ծավալման շնորհիվ ընդգրկել է նաև բայական մյուս ձևերը¹:

Այստեղից էլ ժխտվում է Ե. Յա. Մառի այն տեսակետը, թե հայերենի բայական «վ» ածանցը գոյացել է «իւ» հնչյունախմբի փոփոխությամբ. օրինակ՝ կոիւ — կովել, թիւ — թվել, քանի որ հիշյալ կազմությունների մեջ «իւ» հնչյունախմբի «վ»-ի անցումը տեղի է ունենում արմատի ներսում և երկուսն էլ արմատի անբաժան բաղադրիչներն են:

Բացի կրավորական և անդրադարձ սեռի բայերից հայերենում բավական մեծ թիվ են կազմում «վ» ածանցն ունեցող չեզոք սեռի այն բայերը, որոնք ոչ մի ձևաբանական կամ երանգավորող իմաստ չունեն. օրինակ՝ բնակվել, գծվել, գծտվել, գանգատվել, գունատվել, թաքնվել, զբաղվել, զմայլվել, հարձակվել, համաձայնվել, հաշտվել, հարկավորվել, հանդարտվել, հիասթափվել, հուսահատվել, նմանվել, պարտվել, սթափվել, սխալվել, ցնորվել, վախճանվել, փարվել:

Հիշյալ կազմությունները արդի հայերենում, չեն կարող գործածվել առանց «վ» ածանցի, օրինակ՝ չենք կարող ասել՝ հաշտել, համարձակել, գծել, բնակել և այլն, հետևաբար հիշյալ կազմությունների մեջ «վ» ածանցը ունի ոչ թե կրավորական իմաստ, այլ կոնկրետացնող բաղադրական ածանցի իմաստ, առանց որի նշված կազմությունները խոսքի մեջ չեն կարող որոշակիություն ունենալ, որպես այդպիսիք:

Բաղադրական նշանակություն կարող են ունենալ նաև հայերենի պատճառական ածանցները. այսպես՝ մոտեցնել, նստեցնել, հեռացնել, զարմացնել, վախեցնել և այլն: Զգացվում է, որ մեկ ուրիշն է դառնում այդ գործողու-

¹ Ա. Արրահամյան. Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 211:

թվան կատարման պատճառը, հետևաբար նշված բառերի մեջ «աքն», «եքն» ածանցները պատճառական նշանակություն ունենող ածանցներ են:

Պատճառական իմաստ ունեցող ածանցների հետ չպետք է շփոթել միևնույն հնչյունական կառուցվածք ունեցող այն ածանցները, որոնք երանգավորող բայածանցներ չեն, այլ հանդես են գալիս բայերի արմատի և վերջավորության միջև որպես անբաժան քաղաղորիչներ և միայն բաղադրական նշանակություն ունեն. օրինակ՝ թաքցնել, հրամցնել, լուրացնել, իրացնել, հատկացնել, վերցնել, լցնել բայերի մեջ «ցն» ածանցը պատճառական ածանց չէ, այլ հիշյալ բայերին որոշակիություն հաղորդող բաղադրական ածանց, առանց որի նշված բայերը չեն կարող կոնկրետություն ունենալ խոսքի մեջ. օրինակ՝ չի կարելի ասել՝ հրամել (հրամցնել), լուրանալ (լուրացնել), իրանալ (իրացնել) և այլն:

Վերջապես, երանգավորող բայածանցները, բացի բաղադրական նշանակությունից, կարող են ունենալ նաև բառակազմական նշանակություն. այսպես՝ հայերենում համեմատաբար ավելի պահպանված կերպը բազմապատկական կերպն է, որն արտահայտվում է «ատ, ոտ, կոտ, տ» ածանցների միջոցով: Բազմապատկական ածանցները բայի գործողությունը հաղորդում են բազմակիության, սաստկության և ուժգնության երանգ, օրինակ՝ ցատկել—ցատկոտել, կտրել—կտրատել, նստել—նստոտել և այլն:

Բազմապատկական ածանցներից «տ» ածանցը որոշ կազմություններում դադարել է բազմապատկական իմաստ արտահայտելուց և վերածվել բառակազմական ածանցի. այսպես «ձգտել» և «գժտվել» բայերի մեջ «տ» ածանցը երանգավորող ածանց չէ, քանի որ «ձգել» բոլորովին այլ բառ է, այլ բառային իմաստով՝ քան «ձգտել» և այստեղ «ա» ածանցը թեև սկզբնապես եղել է բազմապատկական ածանց, սակայն այժմ բազմապատկական իմաստ չունի, այն «ձգել» բայի գործողությունը հաղորդում է ավելի վերացական իմաստ՝ բարձրանալու, հասնելու, կարողանալու և ձգտելու իմաստ:

Նույն կերպ և «գժվել» և «գժտվել» բառերի մեջ «տ» ածանցը մտնելով արմատի (գիժ) և վերջավորության միջև (ել) ցույց է տալիս ոչ թե գործողության կրկնության և ուժգնության իմաստ, այլ ածանցվող բառին հաղորդում է բառաստեղծական ածանցին հատուկ մի նոր ձևական իմաստ՝ մեկի հետ կոպկու, հարաբերությունները վատացնելու, գժտվելու իմաստ:

Ընդհանուր առմամբ դեպքերը դեռևս եզակի են և մեր ուսումնասիրությունները պարզել են միայն երկու դեպք, սակայն այս և նախորդ երևույթները գալիս են ապացուցելու, որ երանգավորող բայածանցները, բացի իրենց հիմնական նշանակությունից (ձևաբանական), կարող են ունենալ նաև սոսկ բաղադրական կամ բառակազմական նշանակություն և լեզվի զարգացման հետագա աստիճաններում կարող են տարածվել և ընդգրկել բառական միջուկ ձևերը:

Պետք է ասել, որ հայերեն լեզվի համար կերպի կատեգորիան այնքան էլ բնորոշ չէ, և այն ավելի շատ դիտվում է որպես կերպի փառացորդ: Եվ թերևս այս է պատճառը, որ ձևաբանական իմաստ արտահայտող ածանցներից բայի կերպային կամ երանգավորող ածանցները հանդես են գալիս մի տեսակի միջին դիրքում. նրանք իրենց ձևաբանական արժեքի հետ ունեն նաև բառակազմական արժեք, էլ չենք խոսում այն մասին, որ երանգավորող ածանցների մեծ մասը վաղուց արդեն կորցրել են իրենց ձևաբանական նշանակությունը և վերածվել բաղադրական և բառակազմական ածանցների:

Որոնք են բառահարաբերական և բառակազմական ածանցները և ինչո՞ւ են տարբերվում միմյանցից:

Բառակազմական կամ բառաստեղծական ածանցներ համարվում են այն երկրորդական ձևովները (մասնիկները), որոնք միանալով հիմնական ձևովներին (բառարմատներին) նոր բառեր են կերտում, օրինակ՝ սիրա—սրտազին, մեղմ—մեղմազին, համ—համեղ, գուշն—գունեղ բառերի մեջ «զին» և «եղ» երկրորդական ձևովները, ածանցվելով «սիրտ», «մեղմ», «համ» և «գուշն» բառերին, բոլորովին նոր իմաստներ են հաղորդել նրանց և ստեղծել են նոր բառական արժեքներ:

Բառակազմական ածանցները ուսումնասիրվում են ձևաբանությունից անկախ՝ բառակազմության բաժնում, թեև երկար ժամանակ համարվել են ձևաբանության ուսումնասիրման առարկա և մտցվել ձևաբանության մեջ: Իսկ բառահարաբերական կամ ձևաբանական մասնիկները, որոնք են՝ հոլովման և խոնարհման վերջավորությունները, հոգնակիներն ու հոգերը, միանալով բառերին ոչ թե փոխում են նրանց իմաստները և նոր բառեր են կերտում, այլ փոխում են բառերի ձևերը միայն (որի համար և բոլորովին անհիմն կերպով կոչվել են բառափոխական մասնիկներ), հետևաբար և նրանք չեն ավելացնում արմատի իմաստին որևէ նոր բան, քանի որ չեն խախտում իմաստային կապը բառի տվյալ և մյուս ձևերի միջև:

Իսկ այդ, բառահարաբերական մասնիկները ավելի պակաս կախման մեջ են գտնվում հիմքից, քան բառաստեղծական ածանցները, քանի որ բառահարաբերական մասնիկները կարող են միանալ ցանկացած հիմքին, մինչդեռ այդպես չեն բառակազմական ածանցները, նրանք միանում են ոչ բոլոր հիմքերին, այլ սահմանափակ թվով հիմքերի կամ արմատների, որոնցով և պայմանավորվում են այդ ածանցների հիմնական նշանակությունները: Այսպես, օրինակ՝ բուն ածանցներից «իկ» երանգավորող ածանցը չի կարող միանալ յուրաքանչյուր արմատի կամ հիմքի, նույնիսկ և այն դեպքում, երբ հնարավոր է պատկերացնել այդ առարկայի ավելի փոքր կամ քեքուշ տեսակը. օրինակ՝ չի կարելի ասել «պատիկ», «մահճակալիկ», «նկարիկ», «թեև փոքրիկ պատեր, մահճակալներ, նկարներ գոյություն ունեն:

Ծիշտ նույն կերպ նաև «վոր» ածանցով կարելի է կազմել «աշխատավոր», «վաստակավոր», «հոշակավոր», բայց ոչ «ընկերավոր», «գլուղավոր», «քաղաքավոր» և այլն:

Մինչդեռ բառահարաբերական ձևերից յուրաքանչյուրը վերցնենք, օրինակ՝ սեռական հոլովի «ի» վերջավորությունը զրկվում է դրեթե բոլոր գոյական կամ գոյականաբար գործածվող բառերի վրա (սեղանի, գլուղի, գրչի, սենյակի, ծաղկի, թերթի, սևի, սպիտակի և այլն): Այսպես և նաև բայի ժամանակ արտահայտող բոլոր մասնիկները և ածանցները, որոնք կարող են գրվել յուրաքանչյուր կանոնավոր բայահիմքի վրա:

Այսպիսով, թեև քերականական իմաստ արտահայտող բոլոր մասնիկները և ածանցները, որոնք են՝ բառահարաբերական մասնիկները (հոլովման և խոնարհման վերջավորությունները, հոգնակիներն ու հոգերը), գերբայական մասնիկները և բայի կերպային ածանցները կարելի է կոչել մի տերմինով՝ «ձևաբանական մասնիկներ և ածանցներ», այնուամենայնիվ անհրաժեշտ է տարբերություն դնել ձևաբանական մասնիկների և ձևաբանական ածանցների արտահայտած ձևական իմաստների միջև: